ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018Թ. ՄԱՅԻՍԻ 13-ԻՑ 15-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (ՍՈՉԻ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**
   Կարեն Ղահրամանյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**
   Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ / ԺԱՄԿԵՏԸ</u>**
   Ռուսաստանի Դաշնություն (Սոչի), 2018թ. մայիսի 13-ից 15-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**
   ՌԴ «Ռոսատոմ» պետական կորպորացիա

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**
   Մասնակցություն «ԱՏՈՄԷՔՍՊՈ» 10-րդ ամենամյա միջազգային համաժողովին

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**
   Քննարկվել է ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի իրականացման ընթացքը:
   Քննարկվել է 2018թ. մարտի 29-ին Երևանում տեղի ունեցած ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի համատեղ հանձնախմբի 6-րդ նիստի արձանագրությամբ նախատեսված աշխատանքների կատարման ընթացքը:
   Քննարկվել է նաև 2019թ. ՀԱԷԿ-ին վառելիքի մատակարարման հետ կապված հարցեր:

7. **<u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**
   Հանդիպում է կայացել ՌԴ «Ռոսատոմ» պետական կորպորացիայի գլխավոր տնօրենի տեղակալ Կ.Կամարովի հետ:
   Հանդիպում է կայացել նաև «Տվել» ընկերության նախագահ Ն. Նիկիպելովայի հետ:
   Հանդիպում է կայացել «Ռուսատոմ սերվիս» ընկերության գլխավոր տնօրեն Ե.Սալկովի հետ:
   Համաժողովի շրջանակներում հանդիպումներ են կայացել նաև «Թենեքս», «Մայակ» ընկերությունների, ինչպես նաև «Միջուկային և ճառագայթային անվտանգության դաշնային կենտրոնի» ներկայացուցիչների հետ:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Պայմանավորվածություն է ձեռք բերվել Կ.Կամարովի՝ հունիս ամսին Երևան այցի վերաբերյալ, որի ընթացքում պետք է քննարկվեն ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի համատեղ հանձնախմբի արձանագրությամբ նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքը, ինչպես նաև ՌԴ «Ռոսատոմ» պետական կորպորացիայի գլխավոր տնօրեն Ա. Լիխաչովի՝ 2018թ. հուլիս ամսին Հայաստան այցի նախապատրաստման հետ կապված հարցեր:

«Մայակ» ընկերության կողմից առաջարկվել են ՀԱԷԿ-ի աշխատած վառելիքի թափոնների վերամշակման նորարարական լուծումներ, որոնք կքննարկվեն ապագայում կիրառելու նպատակով:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Շարունակել աշխատանքները ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագիրը սահմանված ժամկետներում իրականացնելու նպատակով: